Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Էրեբունի, Արաբկիր վարչական շրջանների բ/շ թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/68 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.08.2020թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ղալումյան /գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Դ. Մարտիրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/68 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի օգոստոսի 6-ին, ժամը 16:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/68 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը
1	Նարինե Վարդանյան Խաչիկի
2	Աստիճան ՍՊԸ
3	ՏԵԽՇԻՆ ՍՊԸ
4	ԱՁ Վահրամ Կնյազյան

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 15 փողոցի թիվ 5 բ/շ թեք տանիքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
Աստիճան ՍՊԸ	307,956	300,000		300,000
ՏԵԽՇԻՆ ՍՊԸ		305,000		305,000
2. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց 3 բ/շ թեք տանիքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
Նարինե Վարդանյան Խաչիկի	617,628	555,000		555,000

Աստիճան ՍՊԸ		600,000		600,000
ՏԵԽՇԻՆ ՍՊԸ		615,000		615,000
ԱՁ Վահրամ Կնյազյան		479,000		479,000
3. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելի 33ա բ/շ թեք տանիքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
Աստիճան ՍՊԸ	132960	100000		100000
Նարինե Վարդանյան Խաչիկի		119000		119000
ԱՁ Վահրամ Կնյազյան		135,000		135,000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 ՏԵԽՇԻՆ ՍՊԸ-ի և Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված է «Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ», սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է Լուսինե Մարտիրոսյանի կողմից, իսկ հայտում բացակայում է վերջինես նման լիազորություն վերապահելու մասին փաստաթուղթը՝ լիազորագիրը:

4.3 «Աստիճան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը հաստատված չէ էլեկտրոնային ստորոգրությամբ:

4.4 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել 4.2 և 4.3 նշված մասնակիցներին շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները.

- «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները,

- Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացվել միայն հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք, սակայն չի ներկայացվել տեղեկանքում նշված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ հրավերով պահանջվող փաստաթղթերը: Հաշվի առնելով, որ Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ն ներկայացրել է ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները, որում առկա է թերություն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց

ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելու բացակայող փաստաթղթերը: Բացակայող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կգնահատվի նաև մասնակցի ոչ գնային պայմանների չափանիշները, հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվի զրո,

- Աստիճան ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել միայն հիմնական աշխատակազմի վերաբերյալ հրավերով պահանջվող փաստաթղթերը,

- Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացվել է հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 11.08.2020 թվականին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Ղալումյան

---------- Կ. Հարությունյան

---------- Դ. Մարտիրոսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան